Վիկտոր Մարիամ, գերազոմն ՀԻՒԳՈՅ — 1841 — Լըմերտիէի։

Ստեփան Դիոնեսիոս, դուքս ԲԱՍՓԻՒ — 1842 — Ֆրէյսինուսի։

Հենրիկոս Յովսէփ Գուլիելմոս ԲԱՌԷՆ — 1842 — Ռոժէրի։

ՍԷՆ — ՄԱՐԳ-ԺԻՐԱՐՏԷՆ — 1844 — Գամբը-նոնի։

Կարոլոս Օգոստինոս ՍԷՆԴ-ՊԷՕՎ — 1844 — Գազ. Տըլավինեայ։

Բրոսբեր ՄԷՐԻՄԷ — 1844 — Նոտիէի։

Ալֆրեդ Վիկտոր, կոմս ՏԸ ՎԻՆԵԻ — 1845 — Էդիէնի։

Լուդովիկոս ՎԻՌԷ — 1845 — Սուէի։

Կարոլոս Փրանկիսկոս Մարիամ ՏԸ ՌԷՄԻԻԶԱ — 1846 — Ռուայէ-Գոլարի։

Առոլֆ Դոմինիկոս Փլորենտիոս Յովսէփ ՍԻ-ՄՈՆԻՍ ԱՄԲՈՍ — 1847 — տը Ժուլի։

Յովհաննէս Յակոբոս Անտոն ԱՄԲԷՐ — 1847 — Կիրոյ պարոնին։

Պօղոս, դուքս ՆՈՍՑԼ — 1849 — Շագոպրիա-նի։

Յովհաննէս Մարիամ Նաբոլէոն Տէզիրէ ՆԻԶԱՐ — 1850 — տը Ֆէլէցի։

Կարոլոս, կոմս ՏԸ ՄՈՆԴԱԼԱՆՊԷՐ — 1851 — Տրոզի։

Պետրոս Անտոն ՊԷՌԻԷ — 1852 — տը Սէն-Բրիէ կոմսին։

Փելիքս Անտոն Փիլիպերդ ՏԻԲԱՆԼՈՒ — 1854 — Դիսոյի։

Սամուէլ Իւսդազատ ՍԻԼՎԷՍԴՐԸ ՏԸ ՍԱՍԻ — 1854 — Ժէյի։

Էրնէսդ Վիլֆրիտ ԼԸԿՈՒՎԷ — 1855 — Ան-սլոյի։

Կարոլոս Աքիլլէս Վիկտոր Լեւոնտ, դուքս ՊՐՈԼԵԻ — 1855 — տը Սէնդ-Օլէր կոմսին։

Փրանկիսկոս ԲՈՆՍԱՐ — 1855 — Պաուր-Լոր-միանի։

Յովհաննէս Մկրտիչ ՊԻՈՑ — 1856 — Կար. տը Լագրըդէլի։

Ալֆրեդ Պետրոս, կոմս ՖԱԼՈՒ — 1856 — Մոլէ կոմսին։

Գուլիելմոս Վիկտոր Եմիլիոս ՕԺԻԷ — 1857 — տը Սալվանտի կոմսին։

Պետրոս Մարինոս Վիկտոր Ռիքարտ ՏԸ ԼԱ-ԲՐԱՏ — 1858 — Ալֆրեդ տը Միւսէի։

Լէոնարտ Սիլուանոս Յուլիոս ՍԱՆՏՈՑ — 1858 — Պրիֆոյի։

Քառասներորդ անգամը՝ Ալեքսիս Կարոլոս Հենրիկոս Գալիրիէ ՏԸ ԴՕՐՎԻԼ. որ 1841ին ընտրուած էր յաջորդ տը Սէսագ կոմսին՝ քանի մը ամիս կայ որ կնքեց իր բազմարդիւն կեանքը. և մինչև հիմա դեռ ոչ ոք փոխանակեց զինքը։ Ճեմարանին մշանջենաւոր քարտուղարն է Պ. Վիլմէն, որ Առնոյի յաջորդեց այս պաշտօնին մէջ՝ 1834 տարուոյն։

Շուէդի նաւատորմիղին արդի վիճակը։ — Շուէդի պետութեան նաւատորմիղը առաջին կարգի ծովային զօրութիւններէն եղաւ զօրաւորագոյնն է. ունի 10 եռայարկ նաւ, 6 ֆրեգատ, 4 գոլէթ, 4 պարք, 9 շոգեշարժ գոլէթ, 20 թնդանօթակիր սլոոպեր, 77 թնդանօթակիր ղալոբ, 122 թնդանօթակիր եօլ, 6 ռմբընկէց նաւակներ (պոմպարդ), 22 շոգեշարժ բանբեր նաւեր (ավիզոյ), 2 արքունական էսք, 21 բեռնաբարձ նաւեր, 594 թիակով ղալոբ. ընդ ամենը՝ 897 նաւ։ Աստնցմէ զատ՝ 590 առագաստաւոր պզտիկ նաւեր ալ։ Գլխաւոր նաւարաններն են 'ի Սդոքհոլմ, Գառլսգրոնա և Կոթէմպուրկ։

Անօթութիւն և անոր հետևանքները։ — Անօթութիւնը կամ սնունդ առնելու պիտոյքը, քիչ շատ դժուարակիր զգացումմ՝ է, որուն աթոռը ստամոքսն է։ Անօթութիւնը այլ և այլ աստիճան ունի. ինչպէս ախորժակ, անօթութիւն, յոգնութիւն, և ընդարձակ կամ չյագեցնալու անօթութիւն։

Խիստ երկայն ծոմ մը եռքը, այնպէս որ վերջապէս մահը հետևի, հետևեալ երևոյթները կը տեսնուին. ստամոքսին ընդունարանը կը նուազի. մէջը օդ պղպջակներով կտոր մը թուք կը գտուի, մեկ քիչ մ՝ ալ խլինք, մաղձ և պանգրէական հիւթ. այլ նաև նոյն իսկ ստամոքսը սովորականէն աւելի կամ նուազ արիւն կ'ընդունի. մաղձը փամփշտակին մէջ ժողվուելով կը թանձրանայ. և իւրաքանչիւր գործարանի պաշտօնը կը ծանրանայ. վերջապէս ստամոքսը բոլորովին պարապ և մերթ ալ մաշածի պէս ինք իր վրայ ժողվուելով կը ծալլուի. անօթութիւնը հեռզհեռէ կեղեքիչ ցաւ մը կը դառնայ. և խիստ շատ անգամ սարսափելի կատաղութիւն մը կը տիրէ կենդանւոյն վրայ. ու մահը անհրաժեշտ կու գայ, կամ սարսափելի տանջանքներէ եռքը և կամ հանդարտ հոգեվարքէ մը, և այնչափ ալ շուտ՝ որչափ որ կրողը մատաղ և զօրաւոր կազմուածքով ըլլայ։

ԱՌԱԾՔ

Երջանկութիւն փախչոտական,
Որ ոչ եւս այլ կարես դառնալ,
Ո՜ խորհրդոցս իմոց տանջանք,
Հիմ՝ ոչ ընդ քեզ եւ յիշատակ քո կորեաւ։

ՊԷՐԴՈՅ

Մատեան կապոյտ ընդարձակ
Յեռեալ տառիւք լուսաձոյլ
Երկինք բանան առաջի։
Իսկ հիմ՝ լուսոյ մեք կարօտք
Ո՞չ ի նոյն գիր թարթափիմք։
— Զի քան ըզգլուխս մեր ի վեր
Զուարթնոց թըւի գոլ գիւան։